# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝**
   Կարեն Անդրեասյան - Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ

2. **Գործուղման վայրը և ժամկետը՝**
   Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ք. Վաշինգտոն, ք. Նյու-Յորք), 2026 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 3-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝**
   *«Foley Hoag»* իրավաբանական ընկերություն

4. **Գործուղման նպատակը և իրականացված աշխատանքները՝**
   Գործուղման նպատակն էր ՀՀ շահերը ներկայացնող միջազգային իրավախորհրդատու *«Foley Hoag»* իրավաբանական ընկերության ներկայացուցիչների հետ՝ առդեմ ձևաչափով քննարկելու ընթացիկ մի շարք արբիտրաժային և դատական վարույթներով ՀՀ ռազմավարությունը և առաջիկա գործողությունների շրջանակը:

   Հանդիպումների ընթացքում մասնավորապես քննարկվել են 2026 թվականի հոկտեմբեր ամսին Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում Արդարադատության միջազգային դատարանում քննվող Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի գործով Հայաստանի կողմից ներկայացվելիք պատասխան առարկությունների բովանդակությունը, միջպետական այլ գործերի շրջանակներում Հայաստանի կողմից իրականացվելիք առաջիկա վարույթային գործողությունները, ինչպես նաև *Amulsar Investor Ventures, Walnort Finance Limited* և *Liormand Holdings Limited* ընկերությունների կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության նախաձեռնված ներդրումային արբիտրաժային գործերով Հայաստանի շահերի պաշտպանության ռազմավարությանը և առաջիկա գործողությունները:

**Հարգանքով՝**



**Կարեն Անդրեասյան**